Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.4/[136847]-12
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԺԱՄԸ 16:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Գ. Պողոսյան	«Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
Մ. Առաքելյան	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Մարտիրոսյան	Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ս. Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Վ. Կարապետյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Վ. Պողոսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական գլխավոր մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատայկազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ

Հարկային օրենսդրության փոփոխությունների փաթեթի ազդեցությունը ՓՄՁ միջավայրի վրա

(Ս. Կարայան, Տ. Սարգսյան)

6. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝

1) «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծից հանել 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող օրենքներով սահմանվող հարկային արտոնությունների կիրառության առավելագույնը 5 տարվա ժամանակահատվածի սահմանման վերաբերյալ դրույթը.

2) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանի, «Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող Գ. Պողոսյանի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ Հ. Ավագյանի հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկել «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող հարկի դրույքաչափերը.

3) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի հետ համատեղ քննարկել ՓՄՁ-ի մոտ փոխկապակցվածության ինստիտուտի գծով հարկային վարչարարության մեղմացման հնարավոր տարբերակները և այն կիրառել խոշոր ընկերությունների տրոհման դեպքերում.

4) վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության առաջիկա նիստի քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ